ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

ք. Աշտարակ **30. 07. 2025թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Ա. Գրիգորյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Վ. Հարությունյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դավթյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ն. Ավանեսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Ս. Սարգսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
2. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
3. Մարզի համայնքների 2025թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
4. Մարզի համայնքների կողմից 2026-2028թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) կազմման և ներկայացման աշխատանքների վերաբերյալ:
5. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
6. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
7. 2025թ. Աշտարակ և Թալին համայնքներում կարկտահարությունից առաջացած վնասների վերաբերյալ:
8. Այլ հարցեր:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը՝ մարզպետ Սերգեյ Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության նորանշանակ պետ Աղասի Սահակյանին՝ մաղթելով նրան արդյունավետ աշխատանքային գործունեություն:

Լսեցին՝

1. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ա. Գրիգորյանը զեկուցեց, որ ՀՀ Կառավարության «2021-2026 թվականներին կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրում» Արագածոտնի մարզի դպրոցներից ներառված 36 դպրոցներին, համաձայն ՀՀ կառավարության 22.05.2025թ N635-Ն որոշման, ավելացվեցին ևս 5 դպրոց: Այսպիսով, մարզի 41 դպրոցներ ներառված են «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրում: Նշված 41 դպրոցներից 1-ում աշխատանքները ավարտվել են, 26-ը կառուցման փուլում են, 6 դպրոցների մրցույթները կայացել են, իսկ 8-ը մրցութային փուլում են:

Զեկուցվեց, որ պետական միջոցներով մարզում ընթացող դպրոցաշինության շրջանակներում շինարարական աշխատանքները բնականոն ընթացքի մեջ են, մարզպետի աշխատակազմի համապատասխան խմբի կողմից աշխատանքները մշտադիտարկվում են, այս պահի դրությամբ անլուծելի, սուր խնդիրներ չեն արձանագրվել:

Նշվեց նաև, որ ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել մարզի դպրոցներից հավաքագրված կարիքները՝ դպրոցների շենքային պայմանների, գույքի հետ կապված:

Շինարարական աշխատանքների կատարման համար արդեն իսկ հայտարարվում են մրցույթներ, իսկ գույքի և տեխնիկայի ձեռքբերման համար կնքվել են պայմանագրեր մատակարարման նպատակով:

Տեղեկացվեց, որ Մուղնու հիմնական դպրոցի տանիքի վերանորոգման համար ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվել են տանիքի վերանորոգման աշխատանքներ, որոնք այս պահի դրությամբ ամբողջովին ավարտված են:

2025 թվականի հունիսի 15-ին տեղի ունեցած փոթորկի և ուժեղ քամու հետևանքով Ապարանի թիվ 2 և Լուսագյուղի դպրոցներին հասցված վնասների մասով կազմվել են ամբողջական փաստաթղթեր, որոնք ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարություն: Համագործակցությունը նախարարության հետ շարունակվում են, և շուտով նշված դպրոցների տանիքների վերանորոգման մրցույթները կհայտարարվեն:

2. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ա. Գրիգորյանի կողմից ներկայացվեց տեղեկատվություն մարզպետին կից ստեղծված մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների մասին:

Նշվեց, որ մշտադիտարկման նպատակով հանձնաժողովի անդամների կողմից 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 132 այց: Ամսական առնվազն 2 անգամ մշտադիտարկող խումբը յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագիր դիտարկում է տեղում՝ ուսումնասիրելով կատարված աշխատանքների որակը և նախագծին համապատասխանությունը: Մշտադիտարկումների արդյունքում արձանագրված բոլոր խնդիրներն իրազեկվում են համատեղ շտկման նպատակով:

Մարզպետի կողմից կարևորվեց մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքները: Նշվեց, որ բոլոր շինարարական աշխատանքների օբյեկտիվ շեղումների վերաբերյալ համապատասխան մարմիններին անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորումներ, որպեսզի հետագայում դրական եզրակացությունների մասով խնդիրներ չառաջանան:

3. Մարզի համայնքների 2025թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը 2025 թվականի 1-ին կիսամյակում ընդհանուր կազմել է 47,2%. Աշտարակ՝ 46,2%, Շամիրամ՝ 60,5%, Ապարան՝ 51,2%, Ալագյազ՝ 61,1%, Մեծաձոր՝ 70,9%, Արևուտ՝ 79,9%, Թալին՝ 47,4%, Ծաղկահովիտ՝ 37,2%: Ցածր ցուցանիշներ արձանագրվել են կրկին Ծաղկահովիտ համայնքում: Նշվեց, որ այնտեղ վարչական վարույթ է հարուցվել սեփական եկամուտների պարտավորությունների մարման նպատակով:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանին համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակել պլանավորած եռամսյակային ցուցանիշների հավաքագրման գործընթացը: Առաջարկեց Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին համատեղ աշխատանքներ տանել, խելամիտ լուծում գտնել հավաքագրման ցածր ցուցանիշները բարձրացնելու նպատակով:

4. Մարզի համայնքների կողմից 2026-2028թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) կազմման և ներկայացման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ներկայացվեց համայնքների միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ բոլոր համայնքները օրենքով սահմանված կարգով, ավագանու համապատասխան որոշումներով սահմանված ժամկետում իրենց ծրագրերի փաթեթները ներկայացրել են մարզպետի աշխատակազմ: Վերջնական շտկումներից և ճշգրտումներից հետո դրանք ներկայացվել են ՀՀ կառավարություն:

5. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Ա. Կասիև/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ **2022** թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրից այս պահին ավարտվել է 17 ծրագիր: 19 սուբվենցիոն ծրագրի համար պետական բյուջեից ֆինանսավորման չափը կազմել է՝ 1 832 028 500 ՀՀ դրամ: Ներկայացվեց ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մասին տեղեկատվություն:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր՝ 6 045 271 911 ՀՀ դրամ արժեքով: Աշխատանքների մի մասը ընթացքի մեջ է: 2024թ-ի ընթացքում սկսվել էր 2023թ-ին հաստատված Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցման աշխատանքները: Աշխատանքները ընթացքի մեջ են: Կատարվել է աշխատանքների շուրջ 98%-ը:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 16 ծրագիր: Հաստատված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 10 097 560 426 ՀՀ դրամ: 2024թ-ի ընթացքում աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են սուբվենցիոն վեց ծրագիր: Համաձայն ՀՀ կառավարության 27.12.2024թ. N2085-Ա որոշման ծրագրերի իրականացման համար պայմանագրերի գործողության ժամկետ է սահմանվել 15.11.2025թ.:

2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 21 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանն է ներկայացվել թվով 18 սուբվենցիոն ծրագրերի փաթեթ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն է ստացել 11 ծրագիր:

Մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց բոլոր ծրագրերի ուղղվածության և բաշխվածության վերաբերյալ:

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից կարևորվեց մարզի համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների հսկողությունը, եղան հարցադրումներ մարզի տարբեր համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների ձգձգման պատճառների վերաբերյալ, տրվեցին հստակ հանձնարարականներ ոլորտային պատասխանատուներին՝ ապահովելու ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի և մարզպետի աշխատակազմի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը:

6. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Ա Կասիև/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվում են ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազիֆիկացման և Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ներկայացվեց, որ 2025թ-ին իրականացվել է 52.8 կմ մարզային ավտոճանապարհների կահավորանքի և գծանշման նախագծերի, ինչպես նաև նախագծերի փորձաքննության մրցույթներ: Ընթացիկ տարվան համապատասխան գումարների բաշխման արդյունքում իրականացվել է նաև 228.1 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների նախագծերի, ինչպես նաև նախագծերի փորձաքննության մրցույթներ: Ընթացիկ տարվան համապատասխան գումարների բաշխման արդյունքում առկա մոտավորապես 50.6մլն ՀՀ դրամ գումարի շրջանակում, մրցույթների արդյունքում պատվիրված նախագծանախահաշվային փորձաքննություն անցած փաստաթղթերի հիման նախատեսվում է հայտարարել մարզային նշանակության մոտավորապես 55 կմ ավտոճանապարհների գծանշման և կահավորանքով համալրման մրցույթ:

ՀՀ Արագածոտնի մարզի 5 մանկապարտեզների վերանորոգման համար մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթը կայացել է: Իրականացվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքեր: 5 մանկապարտեզների վերանորոգման աշխատանքները իրականացվելու են հրատապ ծրագրի շրջանակներում: Մարզպետի աշխատակազմի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել մարզի ևս 4 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները պետական ծրագրերի ցանկում ներառելու առաջարկ:

Պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել մարզպետի աշխատակազմի վարչական շենքի գազամատակարարման գծի կառուցման, ջեռուցման համակարգի անցկացման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման

նպատակով մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարվել էր մրցույթ: Մրցույթը կայացել է, կա հաղթող կազմակերպություն:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանին համակարգել և վերահսկել բոլոր նշված շինարարական աշխատանքների գործընթացը:

7. 2025թ. Աշտարակ և Թալին համայնքներում կարկտահարությունից առաջացած վնասների վերաբերյալ */զեկուցող՝ գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Թ. Թովմասյան/*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2025թ.-ի մայիսի 2-ին և 11-ին կարկտահարվել են Թալին համայնքի Արտենի, Լուսակն և Արագածավան բնակավայրերի հողատարածքները: Կարկուտից վնասվել է շուրջ 326 հա պտղատու այգի: 2025թ.-ի մայիսի 13-ին կարկտահարվել են Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բազմաղբյուր, Բյուրական, Կարբի, Աղձք, Ագարակ, Ոսկեվազ, Փարպի, ՈՒշի, Ղազարավան, Օհանավան և Ուջան բնակավայրերի հողատարածքները: Կարկուտից վնասվել է շուրջ 1783 հա պտղատու այգի: 2025թ.-ի հունիսի 30-ին կարկտահարվել են Թալին համայնքի Արտենի, Լուսակն և Դաշտադեմ բնակավայրերի հողատարածքները: Կարկուտից վնասվել է շուրջ 149 հա պտղատու այգի:

2025թ.-ի մայիս և հունիս ամիսներին տեղացած կարկուտի հետևանքով Արագածոտնի մարզում վնասվել է 2255 հա հողատարածք, որի հետևանքով տնտեսվարողներին պատճառվել է 5,261,877,283 ՀՀ դրամի վնաս: ՀՀ Արագածոտնի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է ակտ, որը տրամադրվել է հանրապետական հանձնաժողովին:

Այլ հարցերի շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանը ներկայացրեց տեղեկատվություն Ապարան համայնքում հունիսի 15-ին տեղի ունեցած փոթորիկի և ուժեղ քամու պատճառած վնասների, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**